

## ՆԾԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

(Բանափրական գիտությունների թեկնածու)

## ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՍ ԴԱՐԸ

### Ա.

Հայ ժողովրդի դարավոր ու հարուստ պատմության մեջ չի կարելի հիշել մի այլ իրադարձություն, որև այնպես վճռական և այնքան բախտորոշ նշանակություն ունեցած լինի նրա ճակատագրի վրա, որքան Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը:

Սովետահայ գրականությունը ամբողջությամբ առաջ Հոկտեմբերի ծնունդն է, թեև նրա ավագ ներկայացուցիչները իրենց բարի սերմր հոդի մեջ ավելի վաղ էին նետել: Գրական մտավորականության ճնշող մեծամասնությունը բանական թվականներին անվերապահորնեն անցավ սովետական իշխանության կողմը: Ազգային գրականության և արվեստի շատ ներկայացուցիչները, ըստ որում լավագույնները նրանցից, ձեռնամոլուեղան նոր, սոցիալիստական մշակույթի ստեղծմանը:

Տարբեր սերունդների գրողների համախմբումը և սերտ համագործակցությունը առաջին խև տարիներից հրատապ նշանակություն է ստանում: Գրողները շրջապատվում են արտակարգ ու ջերմացունչ հոգատարությամբ. նրանց ստեղծագործական աշխատանքի համար ստեղծվում են բոլոր պալմաները: Ահա թե ինչ է գրում Հովհ. Թումանյանը արտասահմանում գտնվող Ավ. Իսահակյանին. «...Էղ ամենի հետ միասին քեզ պետք է ասեմ, որ մեր այժմյան կառավարությունը շատ ավելի լավն է՝ քան կարող են երևակալել: Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհում: Մինչև իմ նամակի քեզ հասնելը դու արդեն իմացած կիհնես, որ մի շաբաթ գրողների և գեղարվեստագետների կենսաթոշակ են նշանակել, խև շուտով կիրատարակվի և կիմանա, որ տախի են ամեն արտոնություն, ամեն հարմարություն ու հնարավորություն. նրանց թվում կարդաս և քո անոնք»:


Բանական թվականների հայ գրականու-

թյունը և՛ գաղափարական, և՛ գեղարվեստական տեսակետից բարդ, երբեմն հակասական մի պրոցես էր ներկայացնում: Ստեղծվեցին մի քանի գրական կազմակերպություններ, որոնք հաճախ թեժ բանավեճեր էին մորում միմյանց դեմ՝ որոնելով և գտնելով համար այն նոր ուղին կամ ուղիները, որով գալու էր նորատեղ այդ գրականությունը: Հայ գրողների հին և նոր սերունդների գաղափարական դաստիարակության գործում վճռական դեր կատարեց մեր օրերի քննադատությունը ի դեմս Ալեքսանդր Մյասնիկյանի, Արտաշես Կարինյանի, Հարություն Սուրխանյանի, Հայկ Գյուլիքենյանի և մյուսների: Պայքարելով գեղարվեստական գրականության ժողովրդականության և ուսանողմի համար, Մյասնիկյանն, օրինակ, խոշոր դեր է հատկացնում երկի թեմատիկային: Գեղարվեստական վերարտադրությունը որոշակի, խորապես ապրված ու զգացած կանքի, —այսպիսին է, ասում է Մյասնիկյանը, երիտասարդ սովետական գրականության ուղին դեպի արվեստի բարձունքները: Որոշելով սովետահայ գրականության զարգացման ուղիների հարցը, նա գտնում էր, որ հեղափոխական բռվանդակություն արտահայտելու համար անհրաժեշտ է թեմաներ վերցնել հենց հայկական կոնկրետ իրականությունները և չհանձնվել վերացական դատողությունը:

Ինչպես միշտ, հասարակական վճռական վերափոխումների ժամանակ՝ առաջատարի դերը իր վրա վերցրեց շափածոն: Էպիկական իրականությունը էպիկական բարձրացունչ խոսք էր պահանջում, և ահա հանդես եկավ բանաստեղծների մի ջոկատ. բոլորովին նոր անոններ հայկական պատմատում, որ հիշեցրեց նոր մոտիվներ, մինչ այդ շապած ու շապած:

Սովորին դրանցից անտովոր մականուն վերցրած մի բանաստեղծ էր, նդիք Սողոմոնյանը, որ պետք է անմահանար Զարենց

ՏԵՂՄԱՆՈՒՅՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐԱԿԱՆ



անոնմով: Գրական նեղ շրջաններին նա հայունի էր Մոսկվաում 1922 թվականին հրատարակած բանաստեղծությունների իր ելքու համարով:

Դարաշրջանի նեղադիմության գաղափարների խոր ընկարում, նոր գեղագիտության պատմական անհրաժեշտության գիտակցության այն նորմն էր, որ քերում էր Չառենցը ոչ իբրև մտադիրույթ, այլ իբրև գեղարվանուական խոր: Չառենցն այն դարձավ նայ իրավանության մեջ, ինչ որուական իրավանության մեջ Վրաստիմի Մայակովսկին էր, թեև Չառենցի հետազատ գործունեությունը ուրույն և առավել բեղմնավոր պետք է լիներ: Կոսերը, նեղադիմությունը և պուեժիան նա ընկարում էր որպես մեկ ամերողություն, և դրանով իսկ մեծապես ընդունում սրբազնի անձով թվացող շրջանակը, դարձում ան նորիզոնի գիծ, որը անբռնելի է ո անհասանելի: Առաջին անգամ էր արվածի մեջ այդքան խորություն և այդշափ տեսնելի ընթացքում պատմության միակ արարչի՝ ժողովրդի դեմք:

«Ամենասրբեն», «Սունա», «Ամբոխները խելազարված», «Դեպի ապագան» գործերը մուսն հայկական պեղախայի ունի Ֆոնը: Բայց Չառենցին համընդիմանոր ճանաչում քերեց նրա բանաստեղծությունների ու պուեների շարքը, «Ես և Ինչը» (1923), «Լեհն» (1924), «Լեհն քենին» (1924), «Բայրա Իլիչի, մուժիկի և մի զոյգ կոչիկի մասին» (1924), «Լեհնն ու Ալին» (1925), «Անունարների պատը Փարիզում» (1926), «Թայնան բայլերգ» (1927), «Չողունն մարդը» (1928): Ասես արձագանքելով Գյուրեի այն մորին, թե բանաստեղծը պետք է կարողական նկատել առանձնահատուկը և, որքանով այն իր մեջ առող մի բան է պարունակում, մարմանփորել նրանուն ընդհանուրը, — նա ստեղծում է պատկերներ, որոնք լիներեն են շոշափելիության աստիճան և համապարփակ, ինչպես միտք ինքը:

Պոեժիան կանոնի մոտեցմեն գործություններին նեղ կատարում սոցիալիստական ժինարարության առաջին հաջողությունները: Արդիական թեմատիկան է նեց բացահայտում նոր բանաստեղծներին, ինչպես որ սրանք են հաստատում այդ թեմատիկան: Քանակական թվականների երկրորդ կեսին ճանաչում են գումար արևելքին նվիրված Ազգայի շրջանակություններն ու պուեները, Գուրգեն Մահարտ, Վահրամ Ալազանի, Գեղար Սարյանի, Վանարշակ Նորենցի ընարեզությունը, Նաիրի Զարյանի Էպիկական պուեները: Հանդես են գալիս և բոյորովին նոր անունները, Սարեն Վահոնին, Սարեն Վահոնի, Թա-

թոլ Հորյան: Ենիտասարդությունը քերում է իրենքը, թարմություն, նամարձակություն, նորի սոր զաւցում:

Սեծ Հոկտեմբերը ստեղծագործական նոր կորու է հաղորդում պրոլետարական այսպազում բանաստեղծ Հակոբ Հակոբյանին: 1922 թվականին նա հրապարակում է «Ասուածները խուեցին» պոեմը, հաջորդ տարիներին «Բոլշևիկ և Շիրկանալը» և «Կոլխուտրու» գործերը: Հայրաբարերով առաջին պոեմի վերացականությունն ու կրամիկական երանցավորումը, Հակոբյանը Սովետական Հայաստանի շրանցըներից առաջնակին նվիրված իր գործը դարձնում է աշխատանքի մի լուրջնակ բանաստեղծական մանիֆետուտ: Պուեժիան իշնում է մինչև աշխատանքը, որպեսզի աշխատանքը բարձրանա մինչև պուեժիա:

Եթե բանաստեղծությունը «իրենց ձեռքն էին պահում» առավելապես երիտասարդները, ապա արձակի բնագավառում «նեգելուցիան» պատկանում էր եթե ոչ ամրողությունն այսպ, համենայն դեպս փորձված գրողներին: Սկրանդը Շիրվանզադէ, Նար-Դու, Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Չորյան, Միրզել Մանվելյան, Վահան Թորովյենց: Այդ պատճենուու չէ՝ արդոյք, որ արձակը շատ ամելի ուժականական էր, կամքին մոտ, նվազ հազարարական, բայց բանաստեղծների պուեժիան:

Սա չի հշանակում, ինարկե, թե արձակի բնագավառում երիտասարդներ հանդես չեն կադարձած այդ տարիներին: Պարզապես արձակով սկսող գրողներ կամ «ծնալ» արձակագիրներ մեզ մոտ ևս, ինչպես և ամենուր, համեմատարար փոքր թիվ էին կազմում: Այս տեսակենուից ուշագրավ և հիմնադիմ մի տաղանդ էր Ակսել Բալինոցը, որ համեն եկալ որպես փորձված, հասուն մի գրող և կյանքից անժամանակ ներացալ իբրև նայ դաստիան արձակի ամենախոշոր ներկայացուցիչներից մենք:

Ուղղակի անհավատափ է, որ այն տարիներին, եթե նոր գրականության ստաց դրվագ արդյո հարցերից մեկը վերաբերմունքն էր դասական գրականության նկատմամբ, եթե երիտասարդ գրողները իրենց առաջնահերթ պարտը էին համարում նախ և ստաց պուել այդ գրականությունց, — Բակրուցը շարունակեց նիշա այնտեղից, որտեղ կանգ էր առեւ Թումանյանը: Նրա նախասիրած աշխարհը նույնպես գուղն էր, գուղացին, նողի աշխատավորի փիլիտատությունը: Այ էին, սական, ուսուցի և աշակերտի գեղագիտական մկրտուները, բոյորովին այլ՝ տեսական եւակետները: Այն ժամանակ, եթե մեր գոյացիների համար նողը կործանման

աղբյուր էր, թշնամական մի ոժ, Բակունցի ստեղծագործության մեջ այն բարեհամբուլը և գյուղատն մայրն էր:

Դեռևս տասական թվականներին ներքուն գրողի անուն վաստակած Ստեփան Չորյանը սովորական իշխանության հաստատման առաջին տարիներին շարունակում է ապրել իր հերոսների հետ, ամրողացնել «Մանր մարդկանց» այն պատկերասրամը, որ ամրողովին կլանել էր նրա ստեղծագործական երևակայությունը: Ժամանակակից թեմատիկայով գրված նրա անդրամասիկ գործերը («Հեղումի նախագահը»՝ 1928, «Գրադարանի աղջիկը»՝ 1925) վկայեցին նորն օգալու և վերարտադրելու նրա հազվագյուտ կարողությունը: Չորյանի հերոսներն այժմ կամային, զորեղ բնավորության տեր մարդիկ են. նրանք գիտակցաբար անձնական զոհաբերում են հասարակականին, հեղափոխությանը և ժողովրդին ծառայելու մեջ են գտնում իրենց անձնական երջանկությունը:

Գրական ավելի մեծ վաստակ ունեցող Դերենիկ Դեմիրճյանը քանական թվականներին ամենաակտիվ ժամանակությունն է հանդես բերում գրական-հասարակական կյանքին, գրում է հոդվածներ, ֆելիտուններ, պատմածքներ («Հանգստն տանը»՝ 1927, «Ռաշիդ»՝ 1929, «Սաթոն»՝ 1929, «Նիգյար»՝ 1930, և այլն): Դեմիրճյանի այս հերոսները իրենց ժամանակի ճշմարիտ և անհարդախի հայեցին են. նրանք և գիտեն, թե ինչ են, և գիտեն, թե ինչ են լինելու: Բայց նույնիսկ այդ չերանց զարդարում, այլ զարդարում է այն մոլուցը, որով նրանք նետվում են նոր ժամանակներին ընտառաջ: Նրանք չեն սպասում, որ կյանքն իրենց փոխի. Բենց իրենք են այդ կյանքը փոխում, և նկատելի, և անհկատելի փոխելով նաև իրենց: Այդպիսին է Ռաշիդը, այդպիսին է Նիգյարը, Սաթոն, բոլորն անխափիր:

1923 թվականին Դեմիրճյանը գրում էր իր կատարելություններից մեկը՝ «Քաջ Նազար» կոմեդիան: Ժողովրդական խորունկ, բովանդակությամբ խրթին հեքիաթը ամենավախկու և միաժամանակ բախտից երես տված մարդու մասին մեծատաղանդ գրողի գոչի տակ նոր փայլ, արտակարգ հնչելությունն է ստանում: Դեմիրճյանի նուրբ հումորին վաղոց ծանոթ ընթերցողը այստեղ գտնում է ճշմարիտ մի կատակերգակի, որ միննույն ժամանակ մնում է իմաստուն, ինչպես իմաստուն է հեքիաթն ստեղծող ժողովուրդը: Կատակերգության հաջողության գաղտնիքը նոր ոչ միայն սուր կոմիկական դրությունների և նեզգական անթերի ու անսպառ հումորի մեջ է, այլ գաղափարական նպատակալացության: Մնալով ժողովրդական մը-

տածողության դիրքերում, Դեմիրճյանը կարողացավ իր արձակը բարձրացնել մինչև բարաքական սատիրայի սատիրանի:

Քանակական թվականներին արձակ աչքի ընկնող գործերով հանդես եկան նաև Չարենցը («Երկիր Նախրի», Արազին, Մաքելի Վարդելիանը, Միքայել Մանվելյանը, Վահան Թողովունցը, Զավել Եսայանը և ուրիշներ: Երևան եկան և շուտով սիրելի դարձան նոր անուններ ևս. Հրաչյա Քոչար, Սարգիս Պալազար, Գարեգին Բեն, բանատեղծներից՝ Մկրտիչ Արմեն, Գորգեն Մահմարի և այլք:

## Բ.

Երևանական թվականների սկզբից Հայատաւանի գրական կյանքում տեսի ունեցան տեղաշարժեր, որոնք վճռական ազդեցություն պետք է գործեին ստեղծագործական արտադրանքի վրա. Խոսքը գոյություն ունեցող գրական խմբավորումները ցրելու և բոլոր գրողներին մեկ կազմակերպության մեջ միավորելու մասին է: Ժամանակակի հաստինացել էր դրա համար, քանի որ, ի վերջո, մեր բոլոր գրողները՝ ավագ թե կրտսեր, մեկ նպատակի էին ծառայում:

Վճռական վերագնահատության են ներարկվում անցյալ գրական ժառանգության քննադատական յուրացման և օգտագործման հարցերը: Հայ դասական գրականությունը այսուհետև դիտվում է իրու սովորական գրականության ստեղծման ակունքներից: Նոր, թարմ ստեղծագործություններով հանդես են գալիս Ծիրվանզադեն, Նար-Շոսը, Դեմիրճյանը, Չորյանը: Արդիական թեմայով պատմվածքները ու նովելները են գրում Ակսել Բակունցը, Մովսես Արազին, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Չորյանը, Մկրտիչ Արմենը, Գորգեն Մահմարին, Վահան Թողովունցը, Սատիսու Դարբինյանը, Մերուս Թորգոմյանը, Վահյանը, Հրաչյա Քոչարը և ուրիշներ:

Դեռևս 1907 թվականին գրական ասպարեզ իշած Վահան Թողովունցը, իր ստեղծագործական ուժերի բուռն զարգացումն է ապրում սովորական կարգեր հաստատվելուց հետո: Լայն են նրա ստեղծագործության ընդգրկման շրջանակները, բազմատեսակ՝ շոշափում խնդիրները, սակայն միշտ է նրա ուշադրության կենտրոնումն է եղել աշխատավոր մարդը իր հովզերով ու խոներով: «Ես որոնել եմ աշխատավոր մարդը և նրա պալքարը աշխարհի բոլոր կետերում», — այսպես է արտահայտվել Թողովունցը իր ստեղծագործական ապառու մասին:

1922-ին Ամերիկայից տեղափոխվելով Սովորական Հայաստան, Թողովունցը իր տա-

դանիք ի սպաս է դմում մեր գրականության շամերին: «Պատմա-հեղափոխական թեմայով նա գրում է «Բարոյ» եռահատոր վեպը, առեղծում է նոր բովանդակությամբ արկածային վիպակներ՝ «Պերսի Սալվադոր» և այլն: Հիմանալի են մանեկության թեմայով գրված նրա «Կյանքը մին հոգմեական ճանապարհի վրա» վիպակը, ինչպես և «Հովհանք» որդի Երեմիայի», «Բաց-կապուտ ծաղիկներ», «Ծիրանի ծառ» և այլ գործերը: Թեմատիկ հիմաստով նորությունն էր «Ամերիկա» ժողովածուն և «Նյու-Յորք» վիպակը, ապա և նոր կյանքի ստեղծման ընթացքին նվիրված «Հրկիզված րոթեր», «Բարոյ-Լոնդոն» երկերը: Նրա դրամատիկական ստեղծագործություններից առավել հաջողվածն է «Նոր Բյուզանդիոն» դրաման:

Գեղարվեստական խոսքի այս ինքնատիպ գործեատը շոշափելի ավանդ է մուծել հայ նոր գրականության մեջ, դատապահ նրա առավել ուշագրավ դիմերից մեկը:

1934 թվականին Փարիզից Սովորական Հայաստան է տեղափոխվում տաղանդավոր գրող, աչքի ընկնող հրապարակախուս, գրական, հասարակական գործիչ Զապել Նասանիք: Դեռևս 1927 թվականին այցելելով իր հայրենիքը, նա տեսնում է ազատագրված ժողովրդի ազգային կրանքի վերածնությունը: Վերադառնալով Փարիզ, նա գրում է իր մերժնամքով լի գործերից մեկը՝ «Ազատագրված Դրուժենք»: Հայրենի հոյի վրա նոր մղում է ստանում նրա ստեղծագործական եռանձը: Այստեղ նա գրում է: «Միիինտարի պարտեզներուն» կենսագրական վիպակը, որ պատկերում է նրա մանեկության և պատասեկության տարիները և ։ Պոլսում, արդիականության լուսու լուսավորում անցաւը. կատարում գեղարվեստական լայն բնդուացումներ:

Ակրտիչ Արմենը, որ քահանան թվականների վերջերին արդեն հայտնի էր որպես «Կոմիտասական պատմաճքների» և «Չուրեիդա» վիպակի հեղինակ, 1933-ին լույս է ընծայում «Ալպուտ № 89» և ապա սրա շարունակությունը՝ «Ալպաշին պատկումներ», որ նետու նա միավորելով՝ վերանվանում է «Կարմիր և կապուտ փողիսպաներ»: 1929-ին լույս է տեսնում նրա լավագույն երկը՝ «Հեղնար աղբյուրը», որ հաստատուեն մտնում է հայ արձակի ուկել ֆոնից: Դրանով Արմենը դուրս է գալիս ստեղծագործական լայն ճանապարհ: «Հեղնար աղբյուր» գրական արվեստի բարձր մի գործ է, հարուստ հոգերանական նորր դիտումներով, մարդկանց կենցաղի ու ստվորությունների ինքնատիպ նկարագործություններով, հագեցված քնարական շընչով:

Հետագա շրջանում ևս Արմենը ծագալում է առեղծագործական թեղմնավոր գործունեություն: Նրա գրած նոր վիպակների մեջ «Հեղնար աղբյուրի» բարձրությանը է միտում «Յասվան» (1953): Պատկերելով գյուղական Ուրախի մարդկանց, նա ցոյց է տալիս, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին նոյնին ամենախոր թիկունքը ապրում է լայն կյանքով, ցուցաբերում է եռանդ ու անսպաս արիություն՝ շահօպահելու համար թշնամուն: Հետագա տարիներին Արմենը գրում է բազմաթիվ ու բազմածանր այլ գործեր, այդ թվում՝ «Ուկել հնձան» վիպակը (1957), «Գոյնօգոյն բազալորությունը» ներխաթ-վիպակը (1959) և այլն:

Երեսնական թվականների, ինչպես և մետագա բոլոր տասնմայսիների, սովորական գրականության ուղղությունն ու իմաստ տվեց Եղիշե Զարենցի 1930 թվականին լույս ընծայած «Էպիկական լուսաբաց» ծրագրային բանաստեղծությունների ժողովածուն: Մեծ բանաստեղծիր ամբողջ սրույամբ դնում է կյանքի և գրականության կապի ուժեղացման հարցը, ինարժեք մարդու պատկերման հարցը.

Հարկավոր է ձուլվել դարին,  
Ալում եմ ես.—բայց կա՞ արդյոք  
Ալդրան անհուն ու դժվարին,  
Ալդրան թէ պարզ, թէ բարդ մի գործ:

Նա գրում է, —և սա միանգամացն նոր խոր էր թէ իր և թէ ժամանակի համար,— որ սովորական մեծ արվեստ ստեղծելու համար պետք է ունենալ Պոչկինի և Թումանյանի արվեստը, հոգերանական ուժը, պարզությունը, որ հասնում է իմաստության:

Մեր առջև՝ բաղարացի բանաստեղծն է, Մարտիկ բանաստեղծը, որ հարստացած է դարի իմաստությամբ և կատարելապես տիրում է պոետական արվեստի գիհանցիքին: Ժողովածուն տեղ գտած նրա «Երգ մարտում», «Թուղթ բանաստեղծ բարեկամի» N. N.-ին, գրված Երևանից», «Թուղթ Ալեք Բակոնցին» գրված Լեմինգադից», «Խոհ», «Սոսախիս», «Ընթերցողիս», «Անակընկապ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» շափած նովելը, այլ ներքոյներ, խոնիք, ուրայաթներ ընթերցողի առաջ բաց են անում մի ամբողջ աշխարհ, բարմ ու իմաստաշտ, ինչպես լուսաբացը Ալբարայան աշխարհում: Արվեստագետը պետք է ինքնամոռաց նվիրվի ժողովրդին,—այս է նրա դավանանքը: «Ես այն չեմ այլու» բանաստեղծության մեջ Զարենցը խոսում է իր կորած ստեղծագործական ճանապարհի մասին:

... Ծամիս եմ եղնում և ահա մենակ, Քնարս է միայն ինձ նետ միասին, — Եվ երգում եմ ես, երգում եմ անահ Իմ պայծառացած խոհերի մասին: Դժվար կլինի իմ երթը նիմա, Դժվար ո դժնի, քան երբեմուն, Եվ ճամփիս գուցի օձերի նման Ինձ արյունոտեն ժամբքները ձեր, — Բաց պին է ոգիս... Ո ոչ մի ժամնիք Ինձ չի բաժանի իմ անդող դարից, Ինչպես ոչ մի ուժ ինձ չի բաժանի Իմ շոնդակից, պայծառ քնարից...

«Էպիկական լուսաբացին» անհայտեան հաջողությունը թնավորում է բանաստեղծին, մղում նրան ատեղծելու պոեմների ու բանաստեղծությունների նոր շարքեր: Այսպես է ատեղծվում «Գիրք ճանապարհի» ժողովածուն, որ նոր ու կարևոր փող է ճշանափորում նեղինակի ստեղծագործության մեջ:

Այս գիրքը զգալի մի առաջարայլ էր նախորդի համեմատությամբ, թեև այդ քայլն էլ նրան չազատեց անցյալի նկատմամբ որոշ վուգար հայացքներից («Սատոնցի Դաւիթ», «Պատմության քառութիներով», «Մահվան տեսիլ»): Այդ առավելապես ցավալի է այն պատճառով, որ գրքում, ամբողջությամբ առած, տեղ են գտել գործեր, որոնք սոգորված են համայնական շինարարութան թարմ ու անմիջական տպավորություններով, առողջ, լավատեսական խոհերով արվեստի մասին: Զարենցի շողշողուն տաղանդի առհավտաշան են ժողովածուում տեղ գտած այնպիսի պոեմներ, ինչպիսիք են «Զրահաստու», «Վարդան Մամիկոնյան», «Դեպի լառն Մասիս», «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության», «Սրվեստ քերթության», «Գիրք իմացության», ապա՝ տաղեր, խորհուրդներ, զանգան բանաստեղծություններ ու բարգմանություններ: Եղիշե Զարենցը արվեստագետների այս տիպին է պատկանում, որոնց ամեն մի նոր երկը նոր աշխարհի հայտնագործություն է ճշանակել, և մինչ քննադատությունը կյուրացներ հրապարակի վրա դրվածը, բացականչեղով՝ «Անհ» իսկական Զարենցը», — նա ինքն արդեն արվեստի մի այլ ցամաքամաս էր ուրադի լինում, ըստ որում միշտ ժամանակի հետ և մի փոքր է նրանց առաջ: Այս տեսակետից ահա «Գիրք ճանապարհին» ունախտական արվեստի մի հազվագյուտ նվաճում է հայ դասական պոեզիայի ընդհանուր շութպում:

Եղիշե Զարենցը հիմնամյակի բնիացքում սուետակայ գրականության մեջ հանդես եկած բանաստեղծներից ամենատաղանդավորն է, ինքնատիպը, ջղուոք: Անցնելով

ստեղծագործական բարդ, երբեմն հակասական, բայց միշտ մաքառումներով հարուստ մի ուղի, նա ստեղծեց երկեր, որում մեր հարուստ ժամանակի գեղարվեստական ճշմարիտ վավերագրերն են: Ծարունակելով Տերյանի գործը, նա նոր աստիճանի բարձրացրեց պրեստիջ նշանակությունը, հարստացրեց նոյն ուշեղ մարենքի լեզուն: Իր հսկայական վաստակով Զարենցը վաղայ արդեն դրսու է եկել ազգային շրջանակներից և դարձել մեր դարի ամենախոշոր բանաստեղծներից մեկը:

Երեսնական թվականների հայ քնարեգության մեջ ուշագրավ դեմք է Վաղարշակ Նորենցը: Թումանյանի հասուն ուշագրությանը արժանացած այս շնորհայի պատսեհն գրական ասպարեզ է իշխում 1918—1919 թվականներին: Այսունետև նա սկսում է տպագրվել նոր լուս տեսնող համարյա բոլոր պարբերականներում: 1926 թվականին լուս է տեսնում Նորենցի «Օրերի ճամփին» բանաստեղծությունների և պոեմների առաջն գիրքը, 1930-ին՝ «Եղրկոր գիրքը», 1932-ին՝ «Լիրիկական ֆրոնտը», 1936-ին՝ «Բանաստեղծություններ» ընդարձակ ժողովածուն: Նորենցի լիրիկական հերոսները պղնձագործներն են, մերենավարները, շինարարները, հողի մարդիկ: Նրա պոետական վավագի պատմական ճակատագրին, նրա վերածնության հարցերին:

Այս տարիներին նոր, առավել բարձրարժեք ստեղծագործություններով է հանդես գալիս Վահրամ Ալազարը: 1923 թվականին լուս է տեսնում բանաստեղծի առաջին գիրքը՝ «Տարիների խաղը», 1926-ին՝ «Մաքառումներ» ընդարձակ ժողովածուն: Հաջորդ տարի լուս է տեսնում նոր «Վաթուներորդ հորիզոնում» վեպը՝ նվիրված Ալավերդու պղնձագործների կանքին ու աշխատանքին: Պեղիան Ալազարի սիրած ժանրն է, բայց ոչ միայնը. նա գրում է նաև ակնարկներ, պատմվածքներ, վիպակ, վեպ, հրապարական և քննադատական հոդվածներ, քաղաքական պամֆետներ, ավելի ուշ՝ նաև հուշեր: Ալազարն քաղաքացի բանաստեղծ է. նրա ստեղծագործությունը աչքի է ընկերին բանաստեղծագործությամբ և ներքին անսպառ հավատով:

Խըճաստիա, խոհական բանաստեղծ է Սովորու Տարոնցին: Նա սկսել է տպագրվել 1925 թվականից: Հինգ տարի հետո հրատարակում է «Սովորու» բանաստեղծությունների ժողովածուն, 1933-ին լուս է տեսնում նոր «Ակրունդների երգը», իսկ հաջորդ տարին՝ «Դարերի լեզենդը»: Բանաստեղծի ստեղծագործության մեջ զգալի տեղ են

բոնում ժամանակակից թեմայով գրած, ինչպես և բաղարացիական պատերազմին ըրմանակած հրալիքած հրա բալլադները: Ուշագրավ են նաև հրա քնարական մանրանկարները, ծովերը, քայլակները, պրեմիները, մասնավորապես ժողովրդական ստեղծագործության մոտիվներով հիյուսված զորձերը: Աեզրի նարբուրյան ու ննիմուրյան պունտական ձեւքերի հարատորյան տեսակետից Տարոնցին առնեաստաշնակարգ դեմքերից մեկն է մեր արդի պոեզիայում:

Նշված ժամանակաշրջանում որոշ տեղաշարժ է կատարվում նաև դրամատորգիայի սապարեզմու: Առաջին դրամատորգը, որ վերաբուժություն է ժամանակակից կանքը, պատկերում է իրականության մեջ տեղի ունեցող տցիարական հակամարտությունները, —ինըն է Դերենիկ Դեմիքճյանը. նա գրում է մի շարք պիեսներ, որոնց մեջ առանձնանում են «Ֆոսֆորային շող», «Էնապուտան» դրամաները և «Շապուխն Կորկուտյան» կրոնական: Կատական արժանիքներով անհամեատ բարձր է այս վերջինը: Հեղինակը թիմ է բարձրացնում ինը հասարակությունից մնացած թափթափուկներին, պրտաքույններին, հասարակական բարիքը հափշտակողներին: «Քաջ Նազարի» հեղինակը ստեղծում է բազմաթիվ պատկերներ, որոնք լիաթոք ծիծաղ են կրօնու հանդիսատեսից ինչպես դրույան, նոյնպես և խոսի կոմիզմի շնորհիվ:

Սովետահայ դրամատորգիայի ստեղծման գործում իր ակտիվ մասնակցությունն է հանդիս թերու և անվանի դերասան Վահարշ Վաղարշյանը: Նա ևս գրում է մի շարք պիեսներ, որոնցից առանձնապես ուշագրավ են «Օղակում» և ամենի ուշ ստեղծված «Վանքանոր» դրամաները: Վահարշյանն առաջինն էր, որ դրամատորգիայի նորու ընտրեց Հայաստանի պատմության ուշագրավ շրջանը՝ սովետական իշխանությանը անհիշացած նախորդող ամիսներին տեղի ունեցած բաղարական իրադարձությունները: Պատմական երևույթներն այսուղ ներկայացված են զշմարտացիությամբ, ներուսներն ունեն իրենց ինքնորոշ նկարագիրը, նոգերանությունը, լեզուն: Առավել հաշուրդաբան մի գործ, որ մեր գրականության մեջ մտավ գիտակոր հերոսի՝ Անդր դայու վարպետորեն գժված կերպարի շնորհիվ:

Դրամատորգիայի բնագավառում իր ստեղծագործական ունակություններն է փորձում նաև տաղանդավոր դերասան Մըլքրտիչ Զահանը: 1934 թվականին նա գրում է «Չամնան» դրաման, որ շահում է ԽՍՀՄ

Սինյաորների ստվառի նայտարարած համամիտրենական մրցանակարաշխտթյան ժյորիի երրորդ մրցանակը: «Զանակի սիեպը, —նշում է ժյորին, —բնականորեն չափազանց էֆեկտավոր է և գրված է սրանչելի բանաստեղծական լեզվով»:

Այս շրջանում ատեղծվում են նաև մի շարք այլ պիեսներ ու դրամաներ, գլխավորապես բաղարացիական կրիվների պատմությունց: Հիշատակության արժանի են Սրբն Գոյսկակի «Արշապոյսին», «Սեծ բարեկամություն», Գեղաս Սարյանի «Երեք երգ», Արշավիր Դարբն «Երբ բացվում է մանուշակը» գործերը: Գրվում են նաև պիեսներ պատմական յօնատիպություն, ինչպես Լուրիվիր Սիրայելանի «Գոշը», Սկիբ-Քոշարյանի «Զումշոյ Վարանդացին», Ալեքսանդր Արարտականի «Առն Էմանուելը» և այլն:

#### 9.

Հայրենական մեծ պատերազմը ուրի հանց ինչպես Սովետական Սիոթյան բոլոր ժողովորդներին, այնպէս էլ նայ ժողովրդին: Սեր բավագույն զավակների մետ ուրի եւան նայ գրողները, ունաճ պայքարելու իրենց գրչով, շատերն էլ՝ գրչով ու ավելով սիածանանակ: Գործող բանուկ մէկնեցին Հր. Քոչարը, Գ. Բորյանը, Վ. Անանյանը, Հմ. Սիրանը, Գ. Սևոնցը, Գ. Հովհաննը, Թ. Հորյանը, Գ. Բեսը, Ք. Թափալյանը, Հ. Սահմանը, Ա. Դարբնին, Ա. Ռնձիկյանը, Էդ. Թոփչյանը, Հր. Հովհաննիսյանը, Հ. Սկրադչյանը, Գ. Կոլոյլյանը, Ս. Սողոմոնյանը և որիշներ:

Պատերազմի տարիներին նոգեկան արտակարգ լրական կանքը պարեց և գրական մտավորականությունը: Այնպէս, ինչպէս երեկով համեստ կրտսեւսականը պարունականությունի ներուսի դափնեապակով էր զարդարվում, այդպէս էլ երեկով համեստ կարողություններով օժնված բանատեղծը գրում էր ոգեշունչ, ճշմարիտ հայրենասիրական և ճշմարիտ պունտական գործեր: Արտակարգ ժողովրդականություն և ուժ է ձեռք բերում Ավ. Խասիակյանի հրապարականությունը, Դերենիկ Դեմիքճյանի «Վարդանանք» և Ան. Զորյանի «Պապ բագավոր» վեպերը, Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» պատմա-դիցարականական ողբերգությունը, Հր. Քոչարի ակնարկներն ու պատմվածքները, Գեղաս Սարյանի բալլադները, Հովհանն Շիրազի, Սարմենի, Աշոտ Գրաշու, Գուրգեն Բորյանի, Սողոմոն Տարոնցու, Սուրեն Վահոնեն, Թաթուլ Հորյանի, Գևորգ Էմինի, Համ Սահմանի, Մարտ Մարգարյանի, Հրաչյա Հովհաննեսյանի, Սիլվա Կապտիկյանի լիրիկան:

Ել, հեյ, լսեցեք, վեր հայրենիքիս  
Կտրին զավակներ, ժողովուրդներ քաջ,  
Ելեք, զարթնեցեք, կանգնեցեք արթուն,  
Գիտցեք, քնում են գետերն ու քամին,  
Սակայն չի քնում երբեք թշնամին:  
Ել, հեյ, լսեցեք, ձայն տվեք իրար,  
Ամենքը ոտքի, մարդ քնած չկա...»

Խամբակյանի այս խոսքերն են դառնում ժամանակի հրամայականը: Ասես արձագանքելով մեծ բանաստեղծին, Նաիրի Զարյանը ոգում է իր ուժգին ստեղծագործությունները, այդ թվում՝ «Ուղերձ իմ ժողովորդին», հոչակավոր «Զայն հայրենականը»: Հենարական այս էպոսում հայ ժողովրդի անցած ուղին դիտվում է իրու ազատության, խաղաղության համար մղվող անվերջ մի գոտեմարտ: Հենց այն հանգամանքը, որ ազգային ու սոցիալական ճնշման պայմաններում նա բարձր կատարելության է հասցնում իր հոգակոր մշակույթը, ճարտարապետությունն ու պոեզիան, երգն ու արվեստները, ազգային հանճարեղ էպոսը, —ապացուց է նրա պայքարի արդարացիության: Այդ ժողովուրդը միշտ էլ մանգաղը սրի է փոխել հարկադրաբար, իսկ սուրբ՝ մանգաղի՝ գոհունակությամբ: Ստեղծել, բայց ոչ ավերել, և միշտ բռնել ավերողի ձեռքը, —այս է եղել նրա կրկնական հոգաք հարյուրամյակների ընթացքում: Վերականգնելով ժողովրդի զարգացման շղթայի գլխավոր դրվագները, նա կամ է առնում նրա սոցիալական վերածության վրա, կոչ առնում կրծքով պաշտպանելու այդ ազատությունը:

1944 թվականին Նաիրի Զարյանը գրում է «Արա Գեղեցիկ» պատմական ողբերգությունը: Հավատարիմ մնալով առասպեկի այն մեկնությանը, որ թողել է Մովսես Խորենացին, Զարյանը ողբերգության հիմքում դրել է ազատության, անկախության, խաղաղության, մեր ժողովրդի հեռու հեռավոր հախենքի մղած պաքարի գաղափարը: «Արա Գեղեցիկ»-ը ողբերգության մի դասական մեջ է հայ գրականության մեջ: Երեք գրլիավոր հերոսների՝ Արա, Շամիրամ, Նուարդ, —լայնավորին պատկերումը, անգուտական ուժի ու գեղեցկության հասցրած չափած խորը, փայլուն երկախոսություններն ու մենախոսությունները, հերոսական դյուցազնական մթնոլորտի բարձրաճաշակ մասուցումը այս երկը դարձնում է հեղինակի գլուխ-գործոցը, բարձրարժեք գեղարվեստական մի երկ մեր հարուստ գրականության մեջ:

Հայրենական պատերազմի տարիներին ստեղծագործական լարված կանքով է ապրում և Գեղամ Սարյանը: Բանաստեղծական

իր նկարագրով նորք քնարերգու, նա գրում է մարտական ու հայրենասիրական մի շարք գործեր, որոնք հետագայում խմբվեցին «Խոր դարի երթի» շարքում: Այս շրջանում նրա գրած ստեղծագործությունների մեջ նշանակալից տեղ են գրավում նաև եերկրողին ու սերմնացանին կորցրած երկիր մասին երգերը: Նա գրում է նաև պիեմների ու բաղադրին մի ամբողջ շարք, որոնք լայն ճանաչում են բերում տաղանդավոր հեղինակին: Պակաս սրտամու չեն նաև բանատեղի այն երկերը, որոնց թեմատիկան սովորված է Հայաստանի անցրալից կամ ալվանդություններից («Դեպի կատավինարան», «Սայաթ-Նովա», «Փառքի տաճարը» և այլն):

Սենք խաղաղ էինք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես խոմեցիք վայրագ,  
Սենք ձեր դեմ եւանք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ,  
Սենք հավերժ ենք, կանք, մեր լեռների  
պես,

Դուք հողմերի պես կկորչեք վայրագ,—

այսպես է դիմավորում մեր հայրենիքի վրա հարձակված հորդաներին սովետահայ մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Շիրազը: Այս տարիներին նա հրատարակում է «Բանաստեղծի ձանը» (1942), «Երգերի գիրք» (1942) և «Լիրիկա» (1946) ժողովածուները: Բնության զարթոնքը, կյանքի ծալկումը, ծառ ու ծաղկին, կարկաչող առվակներին, ամպածածկ լեռներին, կարճ ողջ աշխարհին սիրահարված բանաստեղծը այժմ գրում է հրապարակախոսական պատուվ հագեցած այնպիսի ոտանավորներ, որոնք վկայում են եթե ոչ մի երկրորդ Շիրազի ծնունդի, ապա առաջինի հայրենասիրական զգացուների բյուրեղացման, բաղաքացիական լայնախոն մտածողության մասին: Բանաստեղծի պեղիայում հայրենիքի պաշտպանության համար ուրիշ են եղել և նրա զավակները, և նրա լեռներն ու ձորերը... Շիրազի արվեստի ամենաուշագրավ կողմերից մեկը համապարփակ լավատեսությունն է: Աներեկ հավատով են շնչում նրա ոչ միայն հայրենասիրական ոտանավորները, այլև այն գործերը, որոնց թեմաներն են բնությունը, հայրենիքը, մայրը: Բյուրեղակուն է դառնում նրա արվեստը, հարատանում են արտահայտչական միջոցները, բանաստեղծը թեթևանում է բառային պաճուճանքներից, պատկերներից ու համեմատությունների կուտակումներից:

Եթե Հայաչյա Քոչարի հախապատերազման ստեղծագործությունները կարելի է բնորոշել իբրև թեմաների որոնման շրջան, ապա

հաշորդ շրջանը, կապված Հայրենական մեծ պատերազմի հետ, այդ թևմանների հայտնաբերման, մասամբ և մշակման շրջանն է: «Հերուսների ծնններ» և «Նախօրյակին» ժողովածուները լոյս տեսան հենց պատերազմի առաջին տարիններին: Խազմանակատից ուղարկված նրա պատմվածքներն ու ակնարկներն ամենայայն հետաքրքրություն են առաջացնում, ծերքից ձեռք են անցնում թե՛ ուզմանակատում և թե՛ թիկննորություն: Քոչարն այստեղ սյուժեները չի հորինում, այլ վերցնում է, հերոսները չի հայտնագրութում, այլ նկատում է: Այդ հանգամանքի շնորհիվ գրականության մեջ է մտնում մի նոր աշխարհ, հայ և այլազգի ուսումնիկների հայրենասիրական ապրումների, երազանքների, խոհերի աշխարհը: Խրամատներում գրի առնվազագույն այդ ակնարկներն ու պատմվածքները ամբողջությամբ ասած այն խորը էին, որին միայն թիմանոր էր պակասում, — ստեղծագործական շոնչը, ուզում եմ ասել, — ճշշմարիտ գրական գործեր դպնակու համար: Հենց դրան էլ Քոչարը ձեռնարկեց հայրական պատերազմից հետո: Այսպես ստեղծվեց նրա «Մեծ տան զավակները» երկու հատորանոց վեպը:

Այն, ինչ կատարեցին սովորանայ գրուերը Հայրենական պատերազմի տարիներին, իրենց բարձր հայրենասիրության, ինչպես և, ինչպես, բաղարացիական գիտակցության հնտեւանը կարելի է համարել, բայց այն, ինչ Դերենիկ Դեմիքյանը կատարեց այդ տարիներին, հոգևոր սիրագործություն բաների միայն կացելի է բնորոշել: Այդքան ակտիվությունն, եռանդ, աղքան ավլուն ու կիրք դժվար է պատկերացնել վատառողջ, տարիների բնորով ծանրաբեռնված գրողի մոտ: Այս շրջանում նրա գրած հրապարականության հողվածները մի ամբողջ հատոր կարող են կազմել, բայց խորը այն զարմանալի վեպին է վերաբերում, որը պետք է անհանություն բերեր հեղինակին, նրան դասելով հայ ամենախոչըն գրողների շարքը:

Պատմական վեպը իրոք պատմական է, եթե այդպիսին էլ չեն ժամանակը, բայց եթե նոյն ժողովրդի կյանքում տեղի ունեցած երկու իրադարձություններ նոյնատիպ են, — բայց որ մեկը տեղի ունեցած լինի մեկուկես հազարամյակ առաջ, իսկ մյուսը կատարվի մեր օրերում, — երկը գրվում է իրեն պատմական երկ և «ընթերցվում» է իրեն ժամանակակից գործ: Այդպիսին է և «Հարդանանքը», այդպիսին է նաև «Պապ բազավորը»: Այս երկու հայրենական պատերազմները նայ ժողովրդի գիտակցված պատմության երկու հայրերն են: Վարդանը և յորա-

յինները ըմբռնել են հստակորեն, որ իրենք պատմական զարգացման հետևանք են և իմացել են հաստատ, որ իրենք ել պատմություն են ստեղծում փոխելով նրա ընթացքը: Այս է «Հարդանանք»-ի արդիականության գաղտնիքը, այստեղից է աղբյուրանում նրա կենսակարգությունը: Սակայն «Վարդանանքը» հայտնագործություն էր ոչ միայն իր շիլացած, ցոլցացող հայրենասիրությանը, այլև գրական-գեղարվեստական հիացում և հայատություն պատճառող արձանիքներով: Դեմիքյանն այստեղ գերազանցում է նոյնիսկ ինը իրեն: Սի սփրով Շիլլերը ասել է, թե իր մեջ բանատեղծը կորուս է փիլիտփայի հանապարհը և փիլիտփան բանատեղծի: Նոյնը իր մասին կարող էր ասել և «Վարդանանք»-ի մեջինակը: Նա մտածում էր մեծակտավ մի վեպ գրել, բայց ստացվում էր մի ոգեշոնչ պուռ, ծրագրում էր վիպական բնավորություններուն նենալ, ստացվում էին դրամատիկական մոնումենտալ կերպարներ, երազում էր կանացի բանատեղծական տիպերի մասին, ստացվում էին բաշակորով, զորել, ժամանակի ողջ իմացությունը իրենց զավակներին յեկուով կարի միջով տալու պատրաստ հայութիներ... Այստեղ միահյուսված են վեպը, դրաման և սրբագիս ոչ այն պատճառով, որ նեղինակը կատարելազն տիրապետում էր գրական այս երեք սեռերին էլ, այլ որ թեման կարծես թե անհնար էր պարփակել մի ձևի մեջ: Ուղիղ մեկ հայրության առաջ այդպես չ'ընկել արդյոք «Վերը Հայաստանին», որի նեղինակը, իսկն ասած, մահկանացու Արքվանը չէր, այլ անմահ հայրենասիրությունը նվազ սինթետիկ արվեստի մի անսիսի համաձուլվածքը, որ անհամկանայի կարող էր լինել նոյնիսկ մոտ անցյալի համար: Դեմիքյանի նման մի արվեստագետի համար հայոց բազմադարյան պատմությունը թե չէր, այլ խոտացած հնաստություն, որ խորհրդի պետք է հատեր պատահեկան մի սրտի հետ: Կերենիկ Դեմիքյանը «Վարդանանք» վեպը արվեստի հավերժական խորության ու բարմության մի պահպույց է: Այն ստեղծված է պայօնվա, միշտ պայօնվան և գայիք բազմություն ունենալու համար:

Երկունական թվականներին Ստեփան Զորյանի ստեղծագործական նվաճումը եղավ «Մի կյանքի պատմությունը», որ ամենայան ընդունելություն գտավ ինչպես մեր, նոյնպես և ուսու ընթերցողի կողմից: Համեստ, շարքային մարդկանց այդ երգիշը, որ արդեն իր նախընտրած աշխարհն ունի, 1944-ին զարմացրեց ու հիացրեց իր բարեկանմանը, հրապարակի վրա դմելով «Պապ

թագավոր» պատմավեպը: Հեղինակը վեպի հիմքում էր դրել իրադարձություններ, որոնք իրենց դրամատիկ լարվածությամբ եզակի էին նոյնին և հայոց ընդհանրապես դրամատիկ պատմության մեջ: Պապ թագավորի պայքարը պետական, քաղաքական և մշակութային ինքնուրությունների համար, ըստ որում գոտեմարտը մեկ կողմից պատական կենտրոնախուզ ուժերի, մյուս կողմից բյուզանդիայի ու Պարսկաստանի գաղտնի կամ բացահայտ ճնշումների դեմ: Պետք էր, նախ, պետական ու քաղաքական այդ խոշոր մուտքում ազատել զրաքարտությունների այն թանձր շերտից, որ նրա վրա էր կուտակել պատմագրությունը, և ասպա անհրաժեշտ էր ցոյց տալ, որ Պապը գլխավորում էր այն հոսանքը, որն արտօնայում էր ժողովրդի բաղձանքը՝ իր երկիրը տեսնել օտարների համար անմատչելի, յորպայինների համար՝ խաղաղ:

Բազմափորձ հեղինակի գրական վարպետությունն այս վեպում հանդես է գալիս նախ և առաջ հրանում, որ կարողանում է ստեղծել կուռ և արմողական մի կոմպոզիցիա, որ թե՛ պատմական և թե՛ ոչ պատմական հերոսները օրգանապես ձուլվում են գործողությանը, դիտվում պատմական հեռավորության վրա: Եվ սակայն առաջել հաջողության է նա հասնում կերպարներ, ըստ որում հենց մոնումենտալ կերպարներ կերտելու մեջ: այդ շարքում առանձնապես ոչագրավ է ինքը՝ Պապը, սկզբունքային, հեռահայաց և խիզախ, նաև ողբերգական ճակատագրի տեր մի անձնավորություն: Հոյակապ է տըրված Զիրավի ճակատամարտը. նա, ով հյուսել է Հրահատի և Նազենիի քննություն սիրավեպը, թվում է, թե չափուի կարողանար ավարտի հասցեն մոնումենտալ այս նկարագրությունը, բայց նա հորանոր գոյներ է հայտնաբերել իր ներկապնակի մեջ: Այս ամենի, ինչպես և լեզվական բարձր կուլտուրայի շնորհիվ, «Պապ թագավոր» պատմավեպը դափում է սովետական արձակի ակնհայտ նվաճումների շարքը:

Այդպիսին էին Դեմիրճյանը և Զորյանը: Բայց այդպիսիք էին և բոլորը, մեծ, թե փոքր, փորձված, թե սկսնակ, բանաստեղծ, թե արձակագիր: Ահա մի օրինակ. համեստ մի անուն էր գրականության մեջ Թաթով Հորդանը, սիրված ո հարգված, միշտ շարքի մեջ, բայց ոչ նրա առաջ: Եվ ահա մենք նրան տեսնում ենք ուազմանակատի առաջին իսկ գծում: Մի՞թե ամեն այդ օրերին էր պատում այդ երիտասարդը, որպեսզի գրեր ոգեշուն, ողղակի անճանաչելի իր բանաստեղծությունները: Դրանք խմբագրություններն էին հասնում նաև այն ժամանակ, երբ նրանց նե-

դինակն ընկել էր արդեմ ներոսի մասնուի: Եվ ինաստեացան այդ գործերը միանալուց և նոր միայն նկատվեց, որ դրանք գրված են եղել արդունով, բայց ոչ երբեք՝ թանաքով...

Նոր, հիանալի բանաստեղծություններով ու բալլադներով հանդես եկավ Սորեն Վահունին, տաղանդի ինքնատիպ դրսուրումներով փառքեցին Գորգեն Բորյանը, Հրաչյա Հովհաննեանը, Համո Սահմանը, Սիրիս Կապոտիկյանը, Մարտ Մարգարյանը, Սարմենը, Աշոտ Գրաշին, Գևորգ Էմինը, արձակագիրներից՝ Գարեգին Բենը, Վիգեն Խեչոյանը և ուրիշները:

### Դ

Հետպատերազման տարիներին պատմական նոր փող է սկսվում նաև գեղարվեստական գրականության համար: Ժամանակը բողոք արվեստագետների, այդ թվում և գրչի վարպետների առաջ առավել բարդ ու պատահանառու խնդիրներ է դնում: Գլխավորը դրանցից՝ խաղաղ շինարարության պայմաններում սովետական մարդկանց հայրենասիրական խանդավառությունը պատկերելն էր: Եվ ահա հեռավաներազմյան առաջին տասնամյակին լուս են տևանում ն. Զարյանի «Սղբյուրի մոտ», «Փորձադաշտ» կատակերգությունները, Գ. Սարյանի «Վերադարձ» բանաստեղծությունների շարքը, Վ. Անանյանի «Սևանի ամին» վիպակը, Ս. Սահմանյանի «Խաչողիներ» վեպը, Ս. Խանզադյանի «Հողը», Ս. Տարոնցու, Սարմենի, Հ. Ծիրազի, Ս. Կապոտիկյանի, Ս. Գրաշու, Գ. Էմինի, Հ. Սահմանի բանաստեղծական ծողովածուները և այլն:


Իրենց տաղանդի լրիվ հասունացումն են ապրում և միտթենական (առել է թե՝ միջազգային) ճանաչում են ձեռք բերում բանաստեղծներ Հովհաննես Շիրազը, Սիրիս Կապոտիկյանը, Մարտ Մարգարյանը, Համո Սահմանը, Գևորգ Էմինը, Հրաչյա Հովհաննեանը, Պարույր Սևակը, Վահագն Դավթյանը, Աշոտ Գրաշին, Սարմենը և ուրիշներ: Սրանք բանաստեղծական այն սերնդի ներկայուցություններն են, որոնք գալիս էին Զարյանցից հետո, հենց այն սերնդի, որի մասին երազում էր մեծ մումանյանը, գրելով՝

Իմ նոր հայրենիք,  
Հզզոր հայրենիք...

Իրոք, այդ երգը նոր էր, իսկապես՝ նոր էր այդ խոսքը: Նոր ոչ միայն կանքի ու աշխարհի նկատմամբ ունեցած թարմ, լավատեական, ակտիվ մոտեցմամբ, ոչ միայն երգած մոտիվների հարստությամբ, ապրումների ու խոների բարդությամբ ու խորությամբ, այլև մատուցման բազմազան ձևերով կերպերով, վերջապես լեզվի հազվագույն շքեղությամբ:



ԵՐԵՎԱՆ. ԼԵՆԻՆԻ ՀՐԱՄԱՆԸ



Նոյնը կարելի է ամել հետպատերազման նայ արձակի և դրամատորգիայի մասին: Այս ժամանակահատվածում հրատարակում են, ինչպես առվեց, Հրաշը Քոչարի «Մեծ տան զավակները» (ստացին գիրք՝ 1953), Ալբարի Սերմենի «Յասլան» (1952), Սեր Խանզադյանի «Սեր գնի մարդիկ» (1950), Խաչիկ Դաշտենցի «Խորեդան» (1950), Գարեգին Սևոնցի «Թերթան» (1952), Վահագան Սևանյանի «Սևանի ափին» (1951), Լեռնի Հորդենցի «Ըսլի առավոտը» (1953), Ստեփան Աղաջայանի «Անապատում» (1952), Հմայակ Միրանի «Արարատը» (1949), Քրիստափոր Թափալյանի «Պատերազմը», Միքայել Օսթիրյանի «Զինվորները», Բոգդան Վերդյանի «Խոնցի է գայիս երշանկորյունը», Անժելա Ստեփանյանի «Ամառնամուխն» վեպերը: Կոբոնտեսային զույգու կատարված լորջ տեղաշարժերն են նվիրված Անահիտ Սերյանի «Ըսլի վազնին մեջ» և «Գարունը ձան տակ» վեպերը: Վերջինս հակված է ստեղծելու այն տիպի երկեր, որոնք գրականության մեջ կոչվում են բնարական վեպ: Քննարական արձակի ներկայացուցիչներից է և Բագրատ Ռուբարյանը («Բարբառը»): Իրեն նախապես լույս ներդրության դրամատիկական առաջնային մուտքումը նշութ նկատմամբ:

## Ե

Հետպատերազման շրջանի ստվետանական գրականությունը հշանալորիվեց գլխավորապես արդիական թեմաների նվաճմամբ, բայց ոչ նաև գեղարվեստական լորացմամբ: Գրլուստը պատճառների մեջ իր դերը խաղացին նաև շուարդականությունը, մակերևսային մուտքումը նշութ նկատմամբ:

Սովորանական գրականության զարգացման ժամանակակից փուլը (1954—1964) լինելով, բնականաբար, նախորդ շրջանի գրական ընթացքի շարունակությունը, միաժամանակ աչքի է ընկնում գրական արտադրամիք բրանգվակության ու ձևի որակական նարսաւացման նոր կողմերով: Ամենի զգաւոր հայացքը կամքի նկատմամբ, իրականության ամենի բազմակողմանի դիսումը, ժամանակի հական հարցերի ավելի խոր դրվագքը չեն կարող չտալ և, իրոք, շտույ է տվեցին իրենց արդյունքները գեղարվեստական գրականության մեջ: Եվ ճիշտ այնպէս, ինչպես ամեն շրջան թրում է բայց նաև իր սերմենը: Եվ, բանի որ սերմենական գրական ամենները, որոնք մի անգամ գրական անպիսի հասունությունը սերմանակուն չէ, գրական այդ նոր սերմենը իր կնիքը էր դնում արտադրամիք փառ:

Արձակի բնագավառում, օրինակ, հանդես եկան ամուններ, որոնք մի անգամ գրական անպիսի հասունություն, այնպիսի ինքնառին ոչ հանդես թերին, որ դժվարանում են նրանց սրբական համարել: Անա, Միքայէ

Սարգսյանը և Բաղիշ Հովհաննեսիր, առաջինն իր «Կամքը կրակի տակ» և երկրորդն իր «Սերմանացանները չվերադառնա» վիպակիներով դարձալ պատերազմական թեմաներ էին շոշափում, բայց բոլորունին այլ էր մատուցման եղանակը: Ուշագրավ գործերով հանդես եկան Լեռնի Հորդենը («Կարապներ») և Շահնի Թաթիկյանը («Նրա նախապարհը»): Հիշոտակներ Խաչիկ Հրաչյանի «Մորի Մարանը», Բոգդան Վերդյանի «Խոնցի է գայիս երշանկորյունը», Անժելա Ստեփանյանի «Ամառնամուխն» վեպերը: Կոբոնտեսային զույգու կատարված լորջ տեղաշարժերն են նվիրված Անահիտ Սերյանի «Ըսլի վազնին մեջ» և «Գարունը ձան տակ» վեպերը: Վերջինս հակված է ստեղծելու այն տիպի երկեր, որոնք գրականության մեջ կոչվում են բնարական վեպ: Քննարական արձակի ներկայացուցիչներից է և Բագրատ Ռուբարյանը («Բարբառ»): Իրեն նախապես լույս ներդրության դրամատիկական առաջնային մուտքումը նշութ նկատմամբ:

Սեր ծողովոյի հարուստ պատմությունը, նրա մղած ազատագրական կոփվները, բաղարական և հոգևոր անկախության համար մղած պայմանը միշտ էլ գտնվել է մեր գրուների տեսադաշտում: Այդ թեմայի արտահայտությունն էին Ստ. Զորյանի «Հալոց բերդը», Մ. Արազու «Միքայել Օրին», Հովի Ղուկասյանի «Ըսլան Երևանցին», Զ. Դարյանի «Սայաթ-Նովան»: Ամենայացն ընդունելիություն գտավ Ս. Խանզադյանի «Միխթար սպարապետը»: Այս պատմավեպը բայց ընդգրկում ունեցող մի կուայ է. Բեղինակը մեծ փարպետությամբ է լուծել այնպիսի դրժվարին գեղարվեստական խնդիր, ինչպես բազմամարդ տեսարանների, պաշարումների, ճակատամարտերի նկարագրությունն է: «Սիմիար սպարապետն» իրավացիորեն դասվում է հայկական լավագույն պատմավեպերի շարքը:

Ուշագրավ բազմաթիվ պատմածքների, նովելների ու վիստակների նեղինակ Բենիկ Սերյանանի «Ծիրանաքաց» (1946), «Ծաղկած նոշարձան» (1948), «Լեռնային բյուրեղ» (1949) նավարածուները նվիրված են Հայրենական պատերազմի շրջանի իրադարձություններին, նաև թիկունքի ներուսներին: Տաղանդավոր արձակագիր է Սորեն Արթազյանը («Անապար» գործը՝ 1947,

«Խորանորդիք»՝ 1950, «Լեռնցիներ»՝ 1955, «Խիղճը»՝ 1957, «Տոր ձեռք, կյանք»՝ 1962, «Բարի առավոտ»՝ 1964):

Խճնատիպ, իրենց սեփական գրելաձևն ունեցող արվեստագետներ են մեր արձակի մեջ Արիզ Ավագյանը, Ռափայել Արամյանը, Խաժակ Գյուլյանցարյանը, Պերճ Զեյթունցյանը, Վարդեն Պետրոսյանը, Գևորգ Արշակյանը, Հրանտ Մաթևոսյանը:

Բոլորովին առանձնակի է կանօնած Վիգեն Խեչումյանը: Նրա պատմվածքներն ու նովելները միջնադարյան Հայաստանի կյանքից լայն հետաքրքրություն առաջացրին ոչ միայն իրենց ճանաչողական նշանակությամբ, այլև գրական բարձր արժանիքներով: Դեռևս պատերազմի տարիներին հանդես եկած արձակագիրը իրեն անմիջապես դրսորեց իրեն գրական բարձր կուլտուրա ունեցող մի արվեստագետ: Նա գրուերի այն տիպին է պատկանում, որ նոր է և իր սերնդակիցների մեջ, և նրանց մեջ, ովքեր եկել են փոխարինելու այդ սերնդին...

Վերջին շրջանում հշանակալից խմբումներ են տեղի ունենում և պոեզիայում: Բանաստեղծությունն ազատվում է հունորական, խրատաբանական շեշտերից և վերըստանում է գեղագիտական բովանդակություն, վերադառնում է դեպի իր ոլորտը, դեպի հոգեբանություն, ապրում, խոհ: Սկզբում է բանաստեղծական արվեստի զարգացման ու ծաղկման անհասարեալ մի շրջան: Այս տասնամյակի աշքի ընկողությունը նոր է և անհատ: Բանաստեղծությունը ազատվում է հունորական, խրատաբանական շեշտերից և վերըստանում է գեղագիտական բովանդակություն, վերադառնում է դեպի իր ոլորտը, դեպի հոգեբանություն, ապրում, խոհ: Սկզբում է բանաստեղծական արվեստի զարգացման ու ծաղկման անհասարեալ մի շրջան: Այս տասնամյակի աշքի ընկողությունը նոր է և անհատ: Ա. Չարյանի «Արև ու ստվեր» (1957) ծողովածուն, Գ. Մահարու «Հնձաններ» (1959), Վ. Ալագյանի «Հորիզոններ» (1957) ծողովածուների մի շարք նոր գրուեր, Սարմենի «Բանաստեղծի աղբյուրը» (1961), «Կենաց բաժակ» (1963), Վ. Նորենցի «Ծանապարհներ» (1956), «Իմ աշխարհը» (1958), Ս. Տարոնցու «Ավելի լուս» (1958), «Ուսկեղար» (1960), Հ. Շիրազի «Բանաստեղծություններ» (1954), «Քանար Հայաստանի» (1958), Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961), Հ. Սահյանի «Բարձութիք վրա» (1955), «Հայաստանը երգերի մեջ» (1962), Հր. Հովհաննեսի «Հրաշալի այգեպան» (1956), «Ծովի լուրջունը» (1964), Ս. Գրաշու «Ծիածանի լուր երգը» (1961), Գ. Էմինի «Մինչև այսօր» (1959), «Երկու ճամփա» (1962), Ս. Մարգարյանի «Լիրիկական լուսաբաց» (1958), Վ. Դավթյանի «Լուսաբացը լեռներում» (1957), «Թոնդրակեցիներ» (1961), Պ. Ալեքը «Նորից քեզ մետ» (1957), «Անոնիկի զանգակատուն» (1959), «Մարդը ափի մեջ» (1963)

#### գործոր:

Տամամյալի պոետական բերքին իրենց բանաստեղծությունների հասուն խրձերով են մասնակցում հան Հո. Պողոսյանն ու Մ. Վեսպերը, Հենրի. Թումանյանն ու Վ. Արամունին, Ա. Մարգարյանն ու Վ. Պարենցը, Միք. Հարությունյանն ու Ա. Դարբենին:

Արդի հայ պոեզիայի ոմի մասին գաղափար տալու համար են հիշատակելու մեր բանաստեղծներից յոթի անուններ. Դավթյան, Էմին, Կապուտիկյան, Հովհաննեսիսյան, Շիրազ, Սահյան, Ալեք: Առանձին-առանձին վերցրած՝ սրանք առաջնակարգ բանաստեղծներ են և կարող են պարծակը լինել ամեն մի ազգային գրականության համար: Եվ պետք է նկատի ունենալ, որ սրանցից մի մասի գրական գործունեությունն սկսվում է պատերազմի տարիներին, ասել է, թե նրանք գտնվում են իրենց ուժերի և կարողությունների ծաղկման շրջանում: Ցոյ բանաստեղծ, ստեղծագործական յոթ անհատականություն, յոյժ ինքնատիպ ոճ: Եվ որքան հարուստ է նրանց պոետական աշխարհը, ինչքան բարձր՝ գրական կուլտուրան: Սրանք և էլի շատ-շատերը մեր արդի պոետներից տարբեր են և նոյնը համարյա, որովհետև անմիջապես սերված են Զարենցից: Հրաշա Հովհաննեսիսյանի մետ նրանք ևս կարող են դառնալ սովորական գրականության հիմնադրին, ասելով.

Այստեղ ապրում է քո երգի ոգին,  
Որ սերունդներին իրար է կապում,  
Դու ձեռքով գունատ ճակատդ շփում:  
Քեզ բոլորն այստեղ լավ զիտեն այնքան,  
Սեռած չես եղել կարծես ոչ մի պահ,  
Թաղված մեր ազնիվ սրտերում միայն՝  
Դու եղել ես, կաս, կմնաւ անմահ:

Սովետահայ գրականությունը սովետական մեծ ու բազմազգ գրականության անընդաման մասն է, նրա առաջավոր ջոկատներից մեկը: Մեծ Հոկտեմբերի ծննդնը լինելով, այն միաժամանակ բնական շարունակությունն է հայ բազմադարյան ու հարուստ գրականության, կրում է իր մեջ նրա լավագույն ավանդությունները և միաժամանակ դրսորում այնպիսի հատկանիշներ ու գծեր, որ մետևանք են ժողովրդի ազգային ու հոգևոր վերածննդի: Սովետահայ գրականության գաղափարական հիմնական բովանդակությունն են կազմում ազատափրությունը, հայրենասիրությունը, հումանիզմը: Գորկու խոսքերով ասած՝ սոցիալիստական աշխատանքից է նա քաղում իր փիլիսոփայությունը, բարոյագիտությունը և գեղագիտությունը: